ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2024 թվականի հունիսի 24-ի՝ հարցման կարգով նիստի N 12 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի ավագ դասախոս **Կարեն Արշակի Առաքելյանի «Տնտեսագիտական վերլուծություն» ուսումնական ձեռնարկի հրատարակությունը երաշխավորելու** մասին հարցը:

Հրատարակության ներկայացված ուսումնական ձեռնարկը նախատեսված է «Հաշվապահական հաշվառում և հարկում» մասնագիտության առկա և հեռակա ուսուցման բակալավրի կրթական ծրագրերում ներառված «Կառավարչական վերլուծություն» և «Ֆինանսական վերլուծություն» առարկաների դասավանդման համար, ինչպես նաև դասախոսների, հաշվապահների, ֆինանսական կառավարիչների, աուդիտորների և տնտեսագիտական վերլուծության հարցերով հետաքրքրվողների համար: Ձեռնարկը շարադրված է կրթական չափորոշիչների արդի պահանջներով և «Տնտեսագիտական վերլուծություն» դասընթացի ծրագրին համապատասխան, որտեղ ներկայացված են կազմակերպության տնտեսագիտական վերլուծության տեսական հիմունքները, ինչպես նաև կառավարչական և ֆինանսական վերլուծության հիմնահարցերը:

Ուսումնական ձեռնարկն ուղարկվել է 2 արտաքին անանուն («կույր») գրախոսության: Երկու գրախոս փորձագետների եզրակացությունները վերադարձվել են հեղինակին թերությունները շտկելու կամ պարզաբանումներ ներկայացնելու համար: Հեղինակի դիտարկումները ներկայացվելուց հետո ուսումնական ձեռնարկն ուղարկվել է կրկնակի գրախոսության և երկու գրախոս փորձագետների կողմից ստացվել են դրական եզրակացություններ:

Ուսումնական ձեռնարկի վերաբերյալ ստացվել են նաև երկու ներքին գրախոսների դրական եզրակացություններ.

1. Գյուլլո Գաբրիելի Արաբյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու:

2. Տիգրան Ռազմիկի Մանուկյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու:

Ուսումնական ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի 2024 թվականի հունվարի 31-ի նիստում (արձանագրություն N 7) և գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 20-ի, ժամը 14:00-ի նիստում (արձանագրություն N 34):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով 2 արտաքին անանուն («կույր») գրախոս փորձագետների կրկնակի գրախոսության դրական եզրակացությունները, երկու ներքին գրախոսների դրական եզրակացությունները, կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի և գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի ավագ դասախոս **Կարեն Արշակի Առաքելյանի «Տնտեսագիտական վերլուծություն» ուսումնական ձեռնարկը երաշխավորել հրատարակության՝ 150 օրինակ տպաքանակով, «Տնտեսագետ» հրատարակչությունում** (նախատեսված է հրատարակչության տարեկան թեմատիկ պլանով):

Սահմանված ժամկետում (ժամը 9:00-ից մինչև 17:30-ն ընկած ժամանակահատվածում) հարցման կարգով նիստի օրակարգային հարցի քննարկմանն ու քվեարկությանը գիտական խորհրդի 60 անդամից մասնակցեցին 54-ը: Քվեարկության արդյունքներն են. կողմ՝ 54, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ա. Վ. Գրիգորյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Լ. Հարությունյան**

2024 թ. հունիսի 24
Երևան